ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27 մայիսի 2011թ. N 35-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728-Ն հրամանագրի 1.6 կետով և ՀՀ Տավուշի մարզի զարգացման ծրագրի ինստիտուցիոնալ համակարգի մասին փաստաթղթի դրույթներին համապատասխան՝

կ ա ր գ ա դ ր ում ե մ.

1. Ստեղծել Մարզային զարգացման հանձնաժողով հետևյալ կազմով (տես հավելվածը):

2. Սահմանել մարզային զարգացման հանձնաժողովի գործունեության հետևյալ ուղղությունները՝

1) ՄԶՀ-ն գործում է որպես Տավուշի մարզային խորհրդին առընթեր խորհրդակցական մարմին, տեղեկացնում մարզխորհրդին ՄԶԾ-ի նպատակների, առաջնահերթ խնդիրների, գործողությունների ժամկետների և առաջընթացի մասին:

2) Քննության է առնում և հավանություն տալիս ՄԶԾ-ի պլանավորման, իրականացման, դիտարկումների ու վերանայման հետ կապված բոլոր գործողություններին:

3) Ուսումնասիրում է ՄԶԾ-ի ոլորտային աշխատանքային խմբերի գործունեության արդյունքները, մասնավորապես՝ ոլորտային ռազմավարությունների նախագծերը, ըստ անհրաժեշտության պահանջում փոփոխություններ պատրաստված փաստաթղթերում:

4) Ստանձնում է ոլորտային ռազմավարությունների միավորման և արդյունքում ՄԶԾ-ի պատրաստման պատասխանատվությունը:

5) ՄԶԾ-ի նախագիծը քննության առնելուց և հավանություն տալուց հետո ներկայացնում է այն մարզային խորհրդի քննարկմանը, ապա մարզպետի հաստատմանը:

3. Առաջարկել ՄՋՀ անդամ ընտրված համայնքապետերին՝

1) ՄՋՀ-ի պլանավորման և իրականացման հետ կապված առաջարկությունները նախապես քննարկել համապատասխան տարածաշրջանի համայնքապետերի հետ:

2) ՄՋՀ կազմում գործունեության ժամանակաշրջանում լինել հաշվետու համապատասխան տարածաշրջանի համայնքների ղեկավարներին, պարբերաբար տեղեկացնել նրանց ՄՋՀ-ի գործունեության ընթացքի մասին:

4. Առաջարկել ՄՋՀ անդամ ընտրված ՀԿ-ներին՝

1) ՄՋԾ-ի պլանավորման և իրականացման ընթացքում առաջացած բոլոր առաջարկությունները ձևավորել համապատասխան տարածաշրջանի ՀԿ-ների և բնակչության տարբեր խմբերի հետ ունեցած հանդիպումներից և քննարկումներից հետո:

2) Միջոցներ ձեռնարկել ՄՋՀ-ի և բնակչության լայն շերտերի միջև ուղիղ և հետադարձ կապն ապահովելու ուղղությամբ:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ, Տավուշի մարզային զարգացման հանձնաժողովի նախագահ Լ.Սարգսյանի վրա:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. մայիսի 27
ք.Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
հունիսի 27-ի 2011թ. N
թիվ 254-Ա կարգադրության

Կ Ա Զ Մ

ՀՀ Տավուշի մարզի զարգացման հանձնաժողովի

Հ/Հ	Անուն, ազգանուն	Կազմակերպություն
1.	Լևոն Սարգսյան	ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ, ՄԶՀ նախագահ, ՓՄՁ, ԶՄԽ նախագահ
2.	Սվետլանա Դավթյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
3.	Ռոբերտ Ներսեսյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
4.	Միշա Մխիթարյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործառնական մարմինների հարցերով վարչության պետ, ՄԶԾ-ի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտային զարգացման աշխատանքային խմբի ղեկավար
5.	Արտակ Սարգսյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ, ՄԶԾ-ի համայնքային ենթակառուցվածքների ոլորտային զարգացման աշխատանքային խմբի ղեկավար
6.	Կարինե Դովլաթբեկյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, ՄԶԾ-ի սոցիալական հատվածի աշխատանքային խմբի ղեկավար, առողջապահության աշխատանքային ենթախմբի ղեկավար
7.	Աշոտ Փաշինյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, ՄԶԾ-ի սոցիալական հատվածի կրթության աշխատանքային ենթախմբի ղեկավար
8.	Նարինե Ճաղարյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ, ՄԶԾ-ի սոցիալական հատվածի սոցիալական ապահովության աշխատանքային ենթախմբի ղեկավար
9.	Ռազմիկ Մելիքջանյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, ՄԶԾ-ի գյուղատնտեսության զարգացման ոլորտային աշխատանքային խմբի ղեկավար
10.	Գուրգեն Հարությունյան	Մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ , ՄԶԾ-ի մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ոլորտային աշխատանքային խմբի ղեկավար
11.	Սամվել Գևորգյան	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության առաջատար մասնագետ, ՄԶԾ-ի բնապահպանության զարգացման ոլորտային աշխատանքային խմբի ղեկավար
12.	Վարուժան Ներսիսյան	Իջևանի քաղաքապետ
13.	Արմեն Սանթրոսյան	Դիլիջանի քաղաքապետ

14.	Վանուշ Ամիրաղյան	Նոյեմբերյանի քաղաքապետ, Նոյեմբերյանի համայնքների միության նախագահ
15.	Անդրանիկ Ծառյան	Բերդի քաղաքապետ, Բերդի համայնքների միության նախագահ
16.	Գիգոլ Եգանյան	Այրումի քաղաքապետ
17.	Լևոն Գրիգորյան	Այգեհովիտ գյուղական համայնքի ղեկավար
18.	Վարդուշ Ներսիսյան	Աղավնավանք գյուղական համայնքի ղեկավար
19.	Ֆելիքս Մելիքյան	Կոթիի գյուղական համայնքի ղեկավար
20.	Արթուր Ղազարյան	Վ. Ծաղկավան գյուղական համայնքի ղեկավար
21.	Գառնիկ Ղալումյան	Իջևանի համայնքների միության գործադիր տնօրեն
22.	Արտուշ Մարգարյան	Դիլիջանի համայնքների միության գործադիր տնօրեն
23.	Արմինե Ներսիսյան	«Հույսի կամուրջ» ՀԿ, ք. Իջևան
24.	Արծրուն Նազարյան	«Տավուշի ֆերմերների ասոցիացիա» ՀԿ, ք. Իջևան
25.	Սուսաննա Մատինյան	«Հույսի կամուրջ» ՀԿ, ք. Դիլիջան
26.	Մելսիդա Վերանյան	«Ոսկեծղի» ՀԿ, ք. Նոյեմբերյան
27.	Արտակ Չիլինգարյան	«Կաղնի» ՀԿ, ք. Բերդ
28.	Մարիետա Մանուչարյան	«Ուտիքի կանայք» ՀԿ, ք. Բերդ
29.	Աշոտ Հովհաննիսյան	«Դիլնետ սերվիս» ՀԿ ք.Դիլիջան
30.	Արմեն Շահնազարյան	Առևտրաարդյունաբերական պալատ, մասնավոր հատված

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյան